



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • I Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 60) 71-00-92, info@armin.am, www.armin.am, www.yసు.am

№ 2/2016-2017 « 29» փետրվար 2016 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2/2016

**ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝
2016Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ**

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 25-ը (քսանհինգ):

Նիստը նախագահում էր ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ՀՀԻ 2015թ. գործունեության հաշվետվությունը. տարեկան ծրագրի և կատարողական (զեկուցող՝ Մհեր Հովհաննիսյան):
2. 2016 թ. ՀՀԻ իրականացվելիք գիտաժողովները և գիտակրթական այլ կառույցների կազմակերպած գիտաժողովներին ՀՀԻ աշխատակիցների մասնակցությունը (զեկուցող՝ Մհեր Հովհաննիսյան):
3. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում ասպիրանտական տեղերի հատկացումը (զեկուցող՝ Մհեր Հովհաննիսյան):
4. Տ. Վարդանեստվայի «Культура хачкаров IX-XIII вв. Арагацотна и Котайка» մենագրության տպագրության երաշխավորման հարց (զեկուցող՝ Հայկ Ավետիսյան):
5. Ընթացիկ այլ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին. 2015 թ. ՀՀԻ գործունեության ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին: Փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյանը ներկայացրեց հաշվետվությունը:

Որոշեցին. - Հաստատել 2015 թ. ՀՀԻ գործունեության ծրագրի հաշվետվությունը:

2. Լսեցին. - 2016 թ. ՀՀԻ իրականացվելիք գիտաժողովները և գիտակրթական այլ կառույցների կազմակերպած գիտաժողովներին ՀՀԻ աշխատակիցների մասնակցության մասին: Փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյանը, ներկայացնելով ՀՀԻ կազմակերպած գիտաժողովները, մասնավորապես, անդրադարձավ դրանց անցկացման ժամկետների և միջոցների հարցերին:

Որոշեցին. - Հաստատել 2016 թ. ՀՀԻ նախատեսված 3 գիտաժողովները:

3. Լսեցին. – ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում ասպիրանտական տեղերի հատկացման մասին:

Որոշեցին. – ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտին՝ որպես գիտակրթական հիմնարկություն, հնարավորություն տալ ունենալու ասպերանտական ընդունելությունը կազմակերպող և թեմաները հաստատող մասնագիտական հանձնաժողով:

4. Լսեցին. – ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտ. աշխատող, պ.գ.թ. Տատյանա Վարդանեստվայի «Культура хачкаров IX-XIII вв. Арагацотна и Котайка» աշխատանքը հրատարակության երաշխավորելու մասին լաբորատորիայի ղեկավար Հայկ Ավետիսյանի զեկույցը: Ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Հ. Միմոնյանն ասաց, որ Տ. Վարդանեստվայի մենագրության հարցի շուրջ առկա է ՀՀԻ հրատարակչական հանձնախմբի դրական եզրակացությունը և առաջարկեց դրական ընթացք տալ աշխատանքը տպագրության երաշխավորելու համար ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ներկայացրած միջնորդությանը:

Որոշեցին. – ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտ. աշխատող, պ.գ.թ. Տատյանա Վարդանեստվայի «Культура хачкаров IX-XIII вв. Арагацотна и Котайка» աշխատանքը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ս. Հովհաննիսյան

29.02.2016 թ.

Վ. Տ.